«Դեդալ» ՍՊԸ կողմից Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20.07.2020թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 1-ի N 63 որոշման հավելված N 11-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որպես ազդակիր համայնք «Կապանի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի փոքր դահլիճում 2020 թվականի հուլիսի 15-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Դեդալ» ՍՊԸ կողմից Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Դեդալ» ՍՊԸ տնօրեն՝ Ռ. Համբարձումյանը, «Ընդերք» ՍՊԸ տնօրեն՝ Սահարոն Գևորգյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Հայրապետյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2020 թվականի հուլիսի 2-ի թիվ 121 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ընդերք» ՍՊԸ տնօրեն՝ Ս. Գևորգյանին:

Նա նշեց, որ հանրային քննարկման 2-րդ փուլից հետո նախարարության կողմից ընկերությանը տրվեց տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա պետք է կազմվեր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն: Համաձայն այդ տեխնիկական առաջադրանքի «Դեդալ» ՍՊԸ պատվերով կազմվել է արդյունահանման նախագիծ և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն՝ կից

ամբողջ փաթեթով, որում ներառված են հանքի փակման ծրագիրը, թափոնների կառավարման պլանը, բնապահպանական կառավարման պլանը: Այս քննարկման արդյունքում՝ համայնքի համաձայնությունը ստանալուց հետո նախագծային փաթեթը արձանագրության, տեսագրության և մասնակիցների ցուցակի հետ կուղարկվի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Այժմ փորձաքննությունը դարձել է բավականին բարդ պրոցես, այն անցնում է շրջակա միջավայրի նախարարության թվով 7-8 վարչություններով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ ընդգրկվել են մանրակրկտորեն բոլոր հաշվարկները, բոլոր արտանետումները, հանքավայրի մասին տեղեկատվությունները: Ուսումնասիրվել է շրջակա միջավայրի ելակետային վիճակը: Եղվարդի հանքավայրը զբաղեցնում է մոտ 1 հա տարածք, որտեղ արդյունաբերական ընդերքօգտագործման հողեր են: «Դեդալ» ՍՊԸ-ն որոշել է երկարացնել արդյունահանման ժամկետները: Հանքավայրի պաշարները հաստատվել են 2000 թվականին: Հետախուզման աշխատանքները իրականացրել է «Ընդերք» ՍՊԸ-ն, հաստատվել է պաշարները և կազմվել նախագիծ: Պաշարները կազմում են 115000 մ^3 : Նախկինում լիցենզիան 25 տարով էր, իսկ հիմա նոր նախագծով կերկարեցվի 50 տարով: Հանքավայրի միջին բարձրությունը 16 մ է, վերևում 1-1,2 մ կա քայքայված, մարմարացված կրաքարային շերտ: Պաշարները հաստատվել են՝ որպես երեսպատման հումք, իսկ նրա թափոնները կարելի է օգտագործել դեկորատիվ խճի արտադրության համար: Այն կիրառվում է Երևանում, իսկ այստեղ՝ դեռ ոչ: Այդ դեպքում և՛ թափոնները քիչ կլին, և՛ արդյունավետ կլինի:

Հանքավայրը համայնքից գտնվում է 1,5 կմ հեռավորության վրա: Փոքր արտադրողականությամբ աշխատող հանք կլինի: Ընդամենը 8 մ^3 օգտակար հանածո է հանվելու, որից բլոկները օրեկան 3 մ^3, թափոնները՝ 5 մ^3 : Վերջիններս կօգտագործվեն խիճ արտադրելու համար: Քանի որ մոտակայքում ստորերկրյա ջրեր, աղբյուրներ չկան, ուստի ազդեցություն էլ չկա: Հողերի վրա արտադրական հրապարակում (նախագծով 300 քմ) կլինի որոշակի ազդեցություն: Իսկ բուն արտադրական պրոցեսը հողերի վրա ներգործություն չի ունենա, որովհետև հող չկա, այնտեղ զուտ քայքայված կրաքարային շերտ է: Ազդեցությունը կենսաբազմազանության վրա կլինի աննշան: Մոտակայքում չկան պատմության հուշարձաններ:

Հաշվարկներում տրվել է բոլոր պրոցեսներից առաջացող արտանետումները (բուլդոզերի աշխատանքից, հումք տեղափոխող ավտոտրանսպորտի աշխատանքից):

Հաշվարկները ցույց են տալիս, որ ազդեցությունը թույլատրելի սահմաններում է, քանզի փոքր արտադրողականությամբ հանք է: Հաշվետվության մեջ ներկայացվել է նաև ազդեցությունների մեղմանը կամ վերացմանը ուղղված միջոցառումներ, որոնք կատարելու դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կլինի զրոյական: Նախագծում առկա է նաև համայնքի սոցիալական զարգացման մասնակցության բաժին, որտեղ կա հստակ ներկայացված, թե ինչ պարտավորություններ է վերցնում ընկերությունը: Վերջինս ամեն տարի պետք է որոշակի գումար փոխանցի համայնքային բյուջե կամ ցուցաբերի լրացուցիչ օգնություններ, ինչպես կորոշվի: Ընդհանուր առմամբ աշխատանքերին կմասնակցեն մինչև 8 աշխատակիցներ, որոնք բնականաբար կլինեն համայնքի բնակիչներ, որը ևս դրական արդյունք է:

Ամփոփում (Դավիթ Հայրապետյան)

Ինչպես նշվեց ընկերությունը ստանձնել է սոցիալական պարտավորություններ: Չկա հանքարդյունաբերության մեջ որևէ ոլորտ, որը շրջակա միջավայրին վնաս չհասցնի: Բայց ինչպես տեսանք և ուսումնասիրեցինք, այնուամենայնիվ, շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նորմայի սահմաններում է: Վստահ եմ համայնքի հետ համագործակցությունը դրական արդյունք կտա և առավել քան վստահ եմ, որ «Դեդալ» ՍՊԸ-ն այնպիսի վարքագիծ, ինչպիսին ցուցաբերել է կապիտալ շինարարության բնագավառում՝ կցուցաբերի նաև այս բնագավառում: Այս և այլ նախաձեռնությունների մեջ ընկերությանը ցանկանում ենք հաջողություններ: Շնորհակալություն բոլորին մասնակցության համար:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Դեդալ» ՍՊԸ տնօրեն **Ռ. Համբարձումյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապան համայնքի ղեկավարի տեղակալ **Դավիթ Հայրապետյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**